



ԳԱՆԱՏԱՐԱՅՈՑ ԹԵՄ ԴԻՕՇԵՍ ԱՐՄԵՆԻԵՆ ԴՍ ԿԱՆԱ

ԿԱՆԱԹԵՂ

ՍՔ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻԶ ԱՈՒԱԶՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿԼՈՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ



GANTEGH BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE
ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINEUR DE MONTREAL

ԿԻՐԱԿԻ, 8 Նոյեմբեր 2020

188

DIMANCHE, 8 Novembre 2020

**Տօն Սրբոց Հրեշտակապետացն
Գաբրիելի եւ Միքայելի
եւ ամենայն երկնային զօրացն
Fête des Saints archanges
Gabriel et Michel
et de toutes les puissances célestes**



615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
Website: www.saintgregory.ca / E.mail: saintgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Թ Կիրակի Չկնի Սրբոյ Խաչին
9^{ÈME} DIMANCHE APRÈS LA SAINTE CROIX

Աստուածաշունչի Ընթերցումներ
ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԵՓԵՍԱՑԻՆԵՐՈՒՆ
ԳՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՍՄԿԷՆ (5.15-33)

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ (8.49-56)

Les lectures de la Bible d'aujourd'hui

ÉPHÉSIENS 1.15-33

LUC 8.49-56

Պատարագիչ եւ քարոզիչ՝
ԱՐԺ. Տ. ԴԱԻԻԹ ՔՀՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ
Հոգեւոր Հովիւ

Célébration et l'Homélie

RÉV. PÈRE DAVID MARGARYAN

Prêtre Paroissial

Առաւօտեան Ժամերգութիւն - 9:30-ին

Office Matines à 9h30

Ս. Պատարագ- ուղիղ սփռում - 10:30-ին

La Sainte Messe – En direct à 10h30

Հոգեհաւստեան

յատուկ պաշտօն - ուղիղ սփռում- ժամը 12:00-ին

Spécial Office Réquiem - En direct à 12h00

DIACRES – ACOLYTES

Organiste: Mme Houry Bedrossian

Chœur “Gomidass”

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS

ԵՓԵՍԱՑԻՆԵՐ 5.15-33

15Ուրեմն զգուշացէ՛ք որ ընթանաք շրջահայեցուպեամբ. ո՛չ թէ անխոհեմներու պէս, 16հապա՛ս իմաստուններու պէս: Գնեցէ՛ք ժամանակը, որովհետև օրերը չար են: 17Ուստի անսիտ մի՛ ըլլաք, հապա հասկցէ՛ք թէ ի՛նչ է Տէրոջ կամքը: 18Մի՛ արբենաք գինիով՝ որուն մէջ անառակութիւն կայ, հապա Յոգիո՛ւմ լեցուցէք: 19Սաղմոսներով, օրհներգերով եւ հոգեւոր երգերով դուք ձեր մէջ խօսակցելով՝ երգեցէ՛ք ու սաղմո՛ս ըսէք Տէրոջ ձեր սիրտերուն մէջ: 20Ամեն ատեն՝ ամեն բանի համար շնորհակա՛լ եղէք Աստուծո՛ւ եւ Յօրմէն, մեր Տիրոջ՝ Յիսուս Զրիստոսի անունով: 21Իրարու հպատակեցէ՛ք Աստուծոյ վախով: 22Կիներ, հպատակեցէ՛ք ձեր ամուսիններուն՝ որպէս թէ Տէրոջ. 23որովհետև ամուսինը կնոջ գլուխն է, ինչպէս Զրիստոս ալ եկեղեցիին գլուխն է, եւ ինքն է մարմինն Փրկիչը: 24Յետեւաբար, ինչպէս եկեղեցին հպատակ է Զրիստոսի, Նոյնպէս ալ կիները թող ըլլան իրենց ամուսիններուն՝ ամեն բանի մէջ: 25Ամուսիններ, սիրեցէ՛ք ձեր կիները, ինչպէս Զրիստոս ալ սիրեց եկեղեցին եւ ընծայեց ինքզինք անոր համար, 26որպէսզի սրբացնէ զայն ու մաքրէ ջուրի լուացումով՝ խօսքին միջոցով. 27որպէսզի ներկայացնէ զայն իրեն՝ իբր փառաւոր եկեղեցի մը, որ չունենայ բիծ, կամ կնճիռ, կամ նման որեւէ բան, հապա ըլլայ սուրբ եւ անարատ: 28Նոյնպէս ալ ամուսինները պարտաւոր են սիրել իրենց կիները՝ իրենց մարմիններուն պէս. ան որ կը սիրէ իր կինը՝ կը սիրէ ինքզինք: 29Արդարեւ ո՛չ մէկը երբեք ատած է իր մարմինը, հապա կը կերակրէ զայն ու կը փայփայէ, ինչպէս Տէրն ալ՝ եկեղեցին. 30քանի որ մենք անոր մարմինին անդամներն ենք, անոր միսն եւ անոր ոսկորներն: 31՝Ատոր համար մարդը պիտի թողու հայրն ու մայրը, եւ պիտի յարի իր կնոջ, ու երկուքը պիտի ըլլան մէկ մարմին՝: 32Ասիկա մեծ խորհուրդ մըն է. բայց ես կը խօսիմ Զրիստոսի եւ եկեղեցիին մասին: 33Սակայն ձեզմէ իւրաքանչիւրը թող սիրէ իր կինը այնպէս՝ ինչպէս ինքզինք, ու կինը թող ակնածի իր ամուսինն:

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ԴՈՒԿԱՄԻ 8.49-56

49Երբ ինք դեռ կը խօսեր, ժողովարանի պետին տունէն մէկը եկաւ եւ ըսաւ. «Աղջիկդ մեռաւ, ան մի՛ անհանգստացներ վարդապետը»: 50Բայց երբ Յիսուս լսեց ասիկա՝ ըսաւ անոր. «Մի՛ վախնար, միայն հաւատա, ու պիտի ապրի»: 51Երբ տունը մտաւ, ո՛չ մէկուն թոյլ տուաւ որ մտնէ, բայց միայն՝ Պետրոսի, Յակոբոսի ու Յովհաննէսի, եւ աղջիկին հօր ու մօր: 52Բոլորն ալ կու լային եւ կը հեծօծէին անոր վրայ. բայց ինք ըսաւ. «Մի՛ լաք. ան մեռած չէ, հապա կը քնանայ»: 53Անոնք ալ զինք ծաղրեցին, քանի գիտէին թէ մեռաւ: 54Իսկ ինք բոլորն ալ դուրս հանելով՝ բռնեց անոր ձեռքէն, ու գոչեց՝ ըսելով. «Աղջիկ, ոտքի՛ ելիր»: 55Անոր հոգին վերադարձաւ, եւ ան անմիջապէս կանգնեցաւ: Յիսուս հրամայեց՝ որ անոր ուտելիք տան: 56Անոր ծնողները զմայլած մնացին, եւ ինք պատուիրեց անոնց՝ որ պատահածը ո՛չ մէկուն ըսեն:

Éphésiens 5.15-33

15Prenez donc garde comment vous vous conduirez soigneusement, non point comme étant dépourvus de sagesse, mais comme étant sages : 16Rachetant le temps : car les jours sont mauvais. 17C'est pourquoi ne soyez point sans prudence, mais comprenez bien quelle est la volonté du Seigneur. 18Et ne vous enivrez point du vin auquel il y a de la dissolution; mais soyez remplis de l'Esprit. 19Vous entretenant par des Psaumes, des cantiques et des chansons spirituelles; chantant et psalmodiant de votre cœur au Seigneur. 20Rendant toujours grâces pour toutes choses au Nom de notre Seigneur Jésus-Christ [à notre] Dieu, et Père. 21Vous soumettant les uns aux autres, en la crainte de Dieu.

22Femmes soyez soumises à vos maris, comme au Seigneur. 23Car le mari est le chef de la femme, comme Christ est le chef de l'Eglise, et il est aussi le Sauveur de [son] Corps. 24Comme donc l'Eglise est soumise à Christ, que les femmes le soient de même à leurs maris, en toutes choses.

25[Et] vous maris, aimez vos femmes, comme Christ a aimé l'Eglise, et s'est donné lui-même pour elle. 26Afin qu'il la sanctifiât, après l'avoir nettoyée dans le baptême d'eau et par sa parole : 27Afin qu'il se la rendît une Eglise glorieuse, n'ayant ni tache, ni ride, ni autre chose semblable, mais afin qu'elle fût sainte et irrépréhensible. 28Les maris donc doivent aimer leurs femmes comme leurs propres corps; celui qui aime sa femme s'aime soi-même. 29Car personne n'a jamais eu en haine sa propre chair, mais il la nourrit et l'entretient, comme le Seigneur entretient l'Eglise. 30Car nous sommes membres de son corps, étant de sa chair, et de ses os. 31C'est pourquoi l'homme laissera son père et sa mère, et il s'unira à sa femme, et les deux seront une même chair. 32Ce mystère est grand, or je parle de Christ et de l'Eglise. 33Que chacun de vous aime donc sa femme comme soi-même; et que la femme révère son mari.

Luc 8.49-56

49Et comme il parlait encore, quelqu'un vint de chez le Principal de la Synagogue, qui lui dit : ta fille est morte, ne fatigue point le Maître. 50Mais Jésus l'ayant entendu, répondit au père de la fille, disant : ne crains point; crois seulement, et elle sera guérie. 51Et quand il fut arrivé à la maison, il ne laissa entrer personne, que Pierre, et Jacques, et Jean, avec le père et la mère de la fille. 52Or ils la pleuraient tous, et de douleur ils se frappaient la poitrine; mais il leur dit : ne pleurez point, elle n'est pas morte, mais elle dort. 53Et ils se riaient de lui, sachant bien qu'elle était morte. 54Mais lui les ayant tous mis dehors, et ayant pris la main de la fille, cria, en disant : Fille, lève toi. 55Et son esprit retourna, et elle se leva d'abord; et il commanda qu'on lui donnât à manger. 56Et le père et la mère de la fille en furent étonnés, mais il leur commanda de ne dire à personne ce qui avait été fait.





ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՈԹՔԸ

ՌԻՍԱԼՈՂԻ ԱՂՈԹՔ

Արարիչ անճառելի եւ աղբիւր ճշմարիտ լոյսի ու իմաստութեան, լուսաւորէ իմ միտքս պայծառութեան նշոյլով եւ մաքրէ իմ մէջէս անգիտութեան խաւարը:

Դո՛ւն, որ մանուկ երեխաներու լեզուներուն մէջ պարզախօսութիւն կը դնես, վարժեցուր իմ լեզուիս եւ Քու շնորհներուդ օրհնութեամբ լեցուր շրթունքներս:

Տո՛ւր զօրութիւն ճանչնալու, ընդունակութիւն՝ պահելու, կորովամտութիւն՝ մեկնաբանելու, դիւրընկալութիւն՝ ուսանելու, ինչպէս նաև՝ առատապէս շնորհախօսելու:

Պատրաստէ ու հարդարէ իմ մուտքս (այս կեանք), ուղղէ ընթացքս եւ աւարտին հասցուր կեանքս իմ դէպի Քրիստոս Յիսուս՝ Տէրը: Ամէն:

ՑԱՒԱԿՑԱԳԻՐ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Տաճարի հոգեւոր հովիւն ու ծխական խորհուրդը իրենց խորին ցաւակցութիւնները կը յայտնեն՝

Քանար, Ճամճի եւ Սայեան

Ընտանիքներուն Ողբացեալներ

Վարդուկ Քանարի (14 Գոկտեմբեր 2020), Աշակուհի Ճամճիի (15 Գոկտեմբեր 2020) եւ Թագուհի Սայեանի (19 Գոկտեմբեր 2020):

SYMPATHY & CONDOLENCES

The Parish Priest and the Parish Council of the St. Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal express their deepest condolences to the

Kanar, Camci, & Saiyan families

on the loss of their beloved:

Vartuk Kanar (October 14, 2020), Arshaguhi Camci (October 15, 2020 & Takouhie Saiyan (October 19, 2020).

ՏՕՆԵՐ

Շաբաթ, 7 Նոյեմբեր 2020

**ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԵՐ
ԳԱԲՐԻԷԼԻ ԵՒ ՄԻԶԱՅԵԼԻ
ԵՒ ՈՂՋ ԵՐԿՆԱՅԻՆ
ՉՕՐՔԻ ՅԻՇՏԱԿԱՎՈՒԹԵԱՆ ՕՐ**



Հայ եկեղեցւոյ Հրեշտակաբանութեան համաձայն՝ հրեշտակները անմարմին գոյացուածներ են, իմացական, անձնիշխան, մշտաշարժ, անսեռ, անմահ եւ սպասաւոր Աստուծոյ: Ըստ եկեղեցւոյ սուրբ հայրերուն՝ հրեշտակները, իբրեւ լուսեղէն Էակներ, ստեղծուած են արարչագործութեան առաջին օրը՝ լոյսի հետ միասին: Աստուծոյ հրահանգով անոնք կոչուած են սպասաւորելու մարդ արարածին: Հետեւաբար անոնք սպասաւոր հոգիներ են, որոնք երկնաբնակ ըլլալով հանդերձ, իրենց մասնակցութիւնը կը բերեն նաեւ երկրաւոր կեանքի ընթացքին, կը գործեն ժամանակի եւ տարածքի մէջ ապրող մարդու հետ, մարդու համար: Հրեշտակներուն կ'անուանեն նաեւ Աստուծոյ պատգամաւորներ, որոնք կ'իրականացնեն Տիրոջ կամքը: Ս. Գիրքը կը վկայէ, որ անոնք բազմաբնակ են: Ըստ Ս. Դիոնիսիոս Արիսպագացիի՝ հրեշտակները ունին ինը դասակարգ՝ Աթոռներ, Քերովբէներ, Սերովբէներ, Տերութիւններ, Չօրութիւններ, Իշխանութիւններ, Պետութիւններ, Հրեշտակապետեր եւ Հրեշտակներ:

Գաբրիել անունը, որ կը նշանակէ «Աստուծոյ Հայր», Բարձրեալի անմիջական պաշտօնեան է, որուն վերապահուած է Տիրոջ վերին խորհուրդները աւետարանելու շնորհքը: Այս հրեշտակապետը, որ ուղարկուած էր Տիրոջ կողմէն, Ս. Կոյս Մարիամին բարի լուրը հաղորդեց, իսկ Չաբարիային՝ Ս. Յովհաննէս Մկրտիչի ծննդեան աւետիսը:

Միքայել անունը, որ կը նշանակէ «Ո՞վ է Աստուծոյ նման», երկնաւոր Արքայի փառքին եւ անոր ժողովուրդին պաշտպանութեան համար մարտնչողն է, որուն տրուած է կառավարելու եւ թագաւորելու շնորհքը: Միքայել հրեշտակապետին անունը չորս անգամ վկայակոչուած է Ս. Գիրքին մէջ:

(Դան. Ժ 13, ԺԲ 1, Յուդ. Ա 9, Յայտ. ԺԲ 7):

HOLIDAYS

Saturday November 7, 2020

COMMEMORATION OF ARCHANGELS GABRIEL AND MICHAEL AND THE ENTIRE HEAVENLY CLASS



According to the Angelology of the Armenian Church the angels are unfleshy, spiritual, independent, always moving, asexual, immortal creatures and God's servants. According to Church Fathers, the angels, as luminous creatures, have been created the first day of Creation, together with the light. By the God's order they are servants, they have been created to serve the human being. Therefore, they are servants who despite their being dyophysite, participate in the earthly life, act together with the human being living in time and space, they act for the human being. The angels are called the messengers and agents of God, who realize God's will. According to Dionysius of Areopagus (Areopagite), there are nine orders of angels – Angels, Archangels, Virtues, Powers, Principalities, Dominations, Throne, Cherubim and Seraphim.

Archangel Gabriel, whose name means "God's man", is God's direct servant, who is granted the grace to evangelize the Lord's mysteries. It was Archangel Gabriel, who was sent by the Lord to bring the good news to the Virgin about the birth of the Savior, and to Zechariah – to bring the good news about the birth of John the Baptist.

Archangel Michael, whose name means "Who is like God?", is the advocate for the Heavenly King's glory and His people's protection, who is granted the virtue to govern and rule. The name of Archangel Michael is mentioned in the Holy Scriptures for four times (The Book of Daniel, 10:13, 12:1, The Letter from Jude 1:9, The Revelation to John 11:7).

ԿԱՐԵՒՈՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

**Ս. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ
ՀԱՍՏԱՏՈՒՄԸ, ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ
ԵՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**



Արդեօք Գիտե՞ի՞ք թե.-

Ի՞նչ կը պահանջուի չափահաս մկրտուողներէն Ս. Մկրտութեան համար:

Եկեղեցին առաջին հերթին չափահաս մկրտուողէն կը պահանջէ **հաւատք**: Յիսուս յստակ կ'ընէ. «Ով հաւատայ եւ մկրտուի, պիտի փրկուի, իսկ ով չհաւատայ, պիտի դատապարտուի» (Մարկ. 16.16): Ուստի հաւատքը կարեւոր նախապայմաններէն մէկն է այս խորհուրդը ընդունելու համար: Ս. Գրիգոր Տաթեւացին կ'ընէ. «Մկրտութիւնը հաւատքի խորհուրդն է, որմէ պարզ կը դառնայ, որ նախ կը հաւատանք եւ ապա կը մկրտուինք»: Պէտք չէ մկրտուիլ երկրորդական բաներու պատճառով, քանի որ կ'ուզէք պսակուիլ եկեղեցւոյ մէջ, չարէն պաշտպանուելու կամ չհիւանդանալու համար, որպէսզի ձեզի հետ ոչ մէկ բան չկատարուի եւ այլն: Ամէն մէկ չափահաս մկրտուող այս խորհուրդին հարկ է՝ մօտենայ գիտակցաբար եւ հոգեւոր գիտելիքներով զինուած՝ խոստովանելով որ կը հաւատայ Յիսուս Զրիստոս Փրկիչին, Անոր տնօրինութիւններուն, կը ցանկայ դառնալ Հայոց Եկեղեցւոյ անդամ եւ այսուհետեւ ապրիլ աստուածահաճոյ քրիստոնեային հարիր կեանքով: Եթէ ունիք այս զգացողութիւնը ձեր հոգիին ու սրտին մէջ, ապա անյապաղ զգցէ՛ք եկեղեցի եւ մկրտու՛նք՝ համալրելով Զրիստոսի յաղթական բանակը: Մկրտութիւնը փրկութեան ճանապարհին սկիզբն է, բայց վերջնական փրկութեան հասնելու համար կը պահանջուի միշտ կենդանի պահել Ս. Մկրտութեան խորհուրդով ստացուած շնորհները:

Երկրորդ նախապայմանը **ապաշխարութիւնն** է, ինչպէս Ս. Պետրոս առաքեալը կը յորդորէր. «Ապաշխարեցէ՛ք, եւ ձեզմէ իւրաքանչիւրը թող մկրտուի Յիսուս Զրիստոսի անունով՝ մեղքերու թողութեան համար, եւ պիտի ընդունիք Ս. Հոգիին պարգեւը» (Գործք. 2.38), այսինքն՝ մարդ պէտք է անդրադառնայ իր անցած կեանքին, հրաժարի նախկին ընթացքէն եւ սկսի նորը՝ Ս. Աւագանէն ծնելով:

Ո՞վ կրնայ մկրտուիլ Հայոց Եկեղեցւոյ մէջ:

Հայոց Եկեղեցւոյ Ս. Աւագանին մէջ կրնան մկրտուիլ ազգութեամբ հայեր, մեր եկեղեցւոյ անդամի հետ ամուսնացող եւ ամուսնացած օտարազգիներ, հայ ընտանիքներու կողմէ որդեգրուած երեխաներ, ինչպէս նաեւ այլադաւաններ եւ այլակրօններ, որոնք սահմանուած կարգով անցած են խորհուրդի համար անհրաժեշտ նախապատրասական-ուսուցողական շրջանակը, ընդունիլ եւ խոստովանիլ մեր դաւանանքը:

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME



SERVICE FOR THE
REPOSE OF SOUL

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԿԻՐԱԿԻ, 8 ՆՈՅԵՄԲԵՐ 2020



Առաջնորդ սրբազան հոր թելադրանքով եւ նախաձեռնութեամբ
Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւին եւ Ծխական Խորհուրդին
հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի յանուն Հայրենիքի
ազատութեան տեղի ունեցող Արցախի ճակատամարտին մեր
քաջարի զինձառայող հերոսներու յաւատ յիշատակին:

Սարգսյան Արթուր Սարգսի, ծնվ. 1975թ.

Յակովլ եւ Դավիթ Արմանի, ծնվ. 2001թ.

Շաքարյան Սերգեյ Սլավի, ծնվ. 1974թ.

Վիրաբյան Տիգրան Ալբերտի, ծնվ. 1977թ.

Միքայելյան Արտյոմ Տիգրանի, ծնվ. 1997թ.

**Պահեստազորային Աթանեսյան Արտակ
Վուրդյայի, ծնվ. 1985թ.**

Ղազարյան Ազատ Վահանի, ծնվ. 2000թ.

Չավախյան Գեւորգ Գրիգորի, ծնվ. 2001թ.

Մխիթարյան Վահե Արմենի, ծնվ. 2001թ.

Բաղդասարյան Արամ Արսենի, ծնվ. 2002թ.

Նալբանդյան Բենյամին Գառնիկի, ծնվ. 2001թ.



Տիկ. Պերճուհի Սօզբէսի,

Հենիքա Սօզբէսի,

Սրբուհի Սօզբէսի,

Թագուր Ալթանի,

Գարինա Ալթանի,

Ալին Քըրըմլիի,

Եազմին Քըրըմլիի,

Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ ամուսնոյն, հոր եւ մեծ հոր՝

**ԳԵՈՐԳ ՍՕՉՔԵՍԻ
(KEVORK SOZKES)**

Մահուան 5-րդ տարելիցին առիթով
ինչպես նաև

**ՍԱՐԳԻՍ ՍՕՉՔԵՍԻ
(SARKIS SOZKES)**

**ՄԱՅՐԱՄ ՍՕՉՔԵՍԻ
(MAYRAM SOZKES)**

**ՆԵՐՍԵՍ ՊՈՅԱԾԵԱՆԻ
(NERSES BOYADJIAN)**

**ԱՐՄԵՆՈՒԻՅԻ ՊՈՅԱԾԵԱՆԻ
(ARMENUHI BOYADJIAN)**

**ԵՆՍԹԵՐ ՊՈՅԱԾԵԱՆԻ
(YESTER BOYADJIAN)**

**ՆՈՒԱՐԴ ՊՈՅԱԾԵԱՆԻ
(NEVART BOYADJIAN)**

**ՀԱՅԿԱՆՈՒՇ ԶԻՒՆՏԻՊԵՔԵԱՆԻ
(HAYGAUSH KUNDUBEKIAN)**

Հոգիներուն ի հանգիստ



Տիկ. Եւ Տիկ. Սեդրակ Եւ Մարալ Տազետաններու,
հնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ ծնողաց՝

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆՆԻԿ

ՄԻՆԱՍԵԱՆՆԵՐՈՒ

(HAROUTIOUN & ANNIK MINASSIAN)

ՊՕՂՈՍ ԵՒ ՄԱՐԻ

ՏԱԳԵՍԵԱՆՆԵՐՈՒ

(BOGHOS & MARIE DAKESSIAN)

ՍՏԵՓԱՆ ԵՒ ԱՐԱՔՍԻ

ՏԱԳԵՍԵԱՆՆԵՐՈՒ

(STEPHAN & ARAXI DAKESSIAN)

Հոգիներուն ի հանգիստ



Շաբթուայ խորհրդածուփուններ



Մի կորսնցներ քու քաջութիւնդ, զաւակս, որքան ալ տարատեսակ փորձութիւններու բուռն ծովը փոթորկի: Մտածէ այն մասին, որ այս ամէնը եւ նոյնիսկ աւելի վատ վիճակը չեն կրնար խոչընդոտել Աստուծոյ շնորհքը եւ Անոր սերը: Եթէ, զաւակս, Քրիստոսի

հանդէպ ձգտումը մեր հոգւոյն մէջ աճի, այդ ժամանակ բոլոր փորձութիւնները կը դառնան շատ փոքր եւ տկար:

Երբ չկայ Քրիստոսի հանդէպ սեր եւ ձգտում, այդ ժամանակ փորձութիւնները կը դառնան դժուար տանելի, եւ մեր օրերը կը լեցուին դառնագին արցունքներով:

Այո, զաւակս, եկէ՛ք կանչենք Յիսուսին, մինչեւ որ Ան Իր հուրը բոցավառէ մեր ներսիդին, եւ այդ ժամանակ բոլոր փուշերը մոխիր կը դառնան:

Հայր Եփրեմ Արիզոնացի

Միշտ յիշէ՛ քեզի բարի գիտութեամբ ուսուցանողին եւ ջանայ անկէ իմանալ կենդանարար պատուիրանները, եւ Տիրոջ կամքով կեանքդ բարեյաջող կ'ապրիս, ինչպէս կ'ըսէ Երանելի Պօղոս առաքեալը. «Այդ բանի վրայ մտածէ՛ եւ հարատեւէ՛, որպէսզի քու յառաջընթացդ յայտնի ըլլայ բոլորին համար» (Ա Տիմոթ. 4.15):

Ս. Աստուծոյ Մեծ

Որքան աւելի պարզ է միտքը, այնքան աւելի պարզ է կեանքը, որքան աւելի պարզ է կեանքը, այնքան Աստուծոյ աւելի մօտ է: Ինչէ՞ն հոգին կենդանութիւն կը ստանայ: Հոգին կենդանութիւն կը ստանայ մաքուր ըլլալէն. նայիր երեխաներու դէմքերուն, ժամանակ մը դուն ինքդ նոյնպէս այդպիսին ես եղեր:

Սիմէոն Աթոսացի

Հոգեւոր մարդը ան է, ով Սուրբ Հոգին ստացած է, դարձած է Սուրբ Հոգիին տաճարը:

Դուք Աստուծոյ տաճարն էք, եւ Աստուծոյ Հոգին կը բնակի ձեր մէջ (Ա Կորնթ. 3.15-16):

Ինչպէս ստանալ Սուրբ Հոգին, այս մասին կը խօսի եւ՝ Աւետարանը, եւ՛, մանաւանդ, մանրամասն՝ սուրբ հայրերը:

Դուք սա պետք է իմանաք:

Հայր Նիկոն Կորոթյով

ՆՈՒՐԱՏՈՒՌՈՒԹՅԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

**DON
À L'ÉGLISE**



**DONATION
FOR THE CHURCH**

CHURCH:

Gomidas Choir \$640
Mr. & Mrs. Jerry & Taline Devletian \$50
Mr. Gagik Vahanian \$50
Mr. Marc Perron \$30

RENOVATION FUND:

Mr. & Mrs. Robert Kechayan \$100

ARTZAKH HUMANITARIAN FUND:

Mr. & Mrs. Arto & Annie Mouradian \$3000
Mr. & Mrs. Agop & Talin Gurunlu \$500
Mrs. Nairy Mechedjian \$300
Mr. Aret Cevahirciyan \$250
Mrs. Silva Bekarian \$160
Mrs. Bayzar Kanar \$100
Mrs. Adrine Abadjian \$100
Mrs. Yelena Mikayelyan \$100
Mrs. Jennifer Madro \$100
Mr. & Mrs. Vahan Sekeryan \$60
Mr. & Mrs. Hovsep & Mary Doramajian \$50

HOKEHANKISD:

THE LATE VARTAN MANIKIAN:

Mr. & Mrs. Hovsep & Mary Doramajian \$50

THE LATE MINASSIAN & DAKESSIAN FAMILIES:

Mr. Vazken Dakessian \$100

For 3 consecutive Sundays

FUNDRAISING FOR ARTSAKH

Organised by Saint Gregory Armenian Apostolic church

Parish council and ACYOC "Kamar"
youth union committee

BAKE SALE

All proceeds will be donated to Armenia Fund

Sunday November 8, 2020

from 12:30-4:00pm

Take out hot meals



Gnocchi ala Gigi



Meatballs with pasta



Ghapama
(Vegetarian Arm. meal)



Caesar salad



Eclair



Cheese pockets
(Bereg)



Lavash
bread



Nazoug



Gata



Napoleon
Masks are mandatory
& keep 2 meter distance !

For your orders please call Parandzem
(514)792-2866, Choghig (514)929-6272
Saint Gregory Armenian Apostolic Church of
Montreal 615 Avenue Stuart
Outremont, QC H2V 3H2

Delivery in Montreal and Laval available for
purchases over \$100



**ՄԱՍՆԱԿՑԻՆԷ ՀԱՅՈՑ ԶԱՅՆԱՄԱՐՏԻԿՆԵՐՈՒՆ
ՅԱՆՈՒՆ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻԷԻ ԵՒ ԱՐՑԱՍԻ
ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ**

Մայր Հայրենիքի եւ ի մասնաւորի Արցախի դիմագրաւած դժնդակ իրավիճակներուն, համեստօրէն կը խնդրենք մեր սիրալիր հաւատացեալներէն, որպէս սփիւռքահայեր բերել մեր հնարաւորութիւններն ու ջանքերը մէկտեղելու վասն մեր Մայր Հայրենիքի եւ Արցախի փրկութեան եւ ազատագրութեան:

**Ձեր մասնակցութեան համար
Կարելի է հեռաձայնել Եկեղեցւոյ գրասենեակ եւ
կամ հետեւեալ
անմիջական թիւերէն մէկուն՝**

Եկեղեցւոյ գրասենեակ (514) 279-3066
Պատասխանատու անձերուն՝
(514) 865-3911, (514)825-5612 եւ (514)792-2866:

Կարելի է այցելել նաեւ՝ Եկեղեցւոյ կայքէջը
Website: Saintgregory.ca կամ armenianchurch.ca –
Artzakh Humanitarian Fund

Faire un don



Նուկիրատուութեան դիմաց – ստանալ տուրքէ զերծ ստացագիր:

Իրաքանչիւր Հայորդի իր մասնակցութեամբ կ'արտայայտէ իր ազգային գիտակցութիւնն ու հայրենասիրական պարտաւորութիւնը ի գին հայրենի հողին փրկութեան:

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 - Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008

stgregorychurch@gmail.com



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



**ՄՐՏԱԲՈՒՆ ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ
Ի ՆՊԱՍՏ
ՄԵՐ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՊԱՅԾԱՌՈՒԹԵԱՆ**

Գիտակցելով այս օրերու դժուարութեան, համեստօրէն կը խնդրենք մեր սիրալիր հաւատացեալներէն, կատարել իրենց սրտաբուխ նուիրատուութիւնները այցելելով Եկեղեցոյ կայքէջը Website - Saintgregory.ca

Faire un don



Շնորհակալութիւն

**YOUR HEARTFELT DONATIONS
FOR THE SUPPORT OF OUR CHURCH:**

Concerning the difficulties that we are facing to those days; we humbly ask our parishioners to remember St. Gregory the Illuminator Armenian Cathedral for the glory of our Church.

Your donations can also be made through:

Church website – saintgregory.ca by:

Faire un don



Thank You!



Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր
Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏԳԱՍ ԵՒ ԵՐԵԿՈՅԵԱԸ
ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Ուղիղ Հեռարձակում – Live



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Հաւատք, Մեր, Լոյս
Եւ Կեանք:

Ամեն Չորեքշաբթի

1 Հոկտեմբեր 2020 սկսեալ երեկոյեան ժամը 5:00-ին:

Արժ. Տ. Դաւիթ Քինյ. Մարգարեանի հետ:

MESSAGE SPIRITUELLE
ET SERVICE DU SOIR

avec le R.P. David Margaryan

Chaque Mercredi

à partir du 1^{er} Octobre 2020 à 17h00.

Կը հրաւիրենք մեր սիրելի հաւատացեալները մասնակից
ըլլալու Աստուածաշնչական նիւթերուն
առցանց եկեղեցւոյ դիմատետրի էջով:


Nous invitons nos chers fidèles à participer à ces séances
d'interprétations bibliques via la page Facebook de l'Église.

Հաճելի հոգեւոր պահեր կը մաղթենք մեր հետեւորդ,
հաւատացեալներուն:

Nous souhaitons a nos fidèles des moments spirituels
agréables.

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/
stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



ՎԱՆԱՄՍԵԱՅ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Ուղիղ հեռարձակում – En direct



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Շաբաթ, 28 Նոյեմբեր 2020

Ժամերգութիւն - երեկոյեան ժամը՝ 5-ին:

**«Ուստի կը յայտարարեմ ձեզի. «Ինչ որ կը խնդրէք աղօթքով,
հաւատացէ՛ք թէ պիտի ստանաք, ու պիտի ըլլայ ձեզի»
(Ղուկ. 11:24):**

Samedi, le 28 Novembre 2020

Office du soir à 17h00.

**“C'est pourquoi je vous dis : tout ce que vous demanderez en priant,
croyez que vous le recevrez, et il vous sera fait”
(Marc 11 :24).**



ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱԶՄԱՎԵՐՊՈՒՄ



Այս յայտարարութեամբ կը փափաքինք մեր հաւատացեալներուն ուշադրութեան յանձնել թէ՛ Յուդարկաւորութեան կարգի ծրագրաւորման պարագային, նախքան որեւէ այլ գործընթացի ձեռնարկելը, համեստօրէն կը խնդրուի առաջին հերթին հեռաձայնել Եկեղեցւոյ գրասենեակ եւ ժամադրուիլ հոգեւոր հովիւին հետ խորհրդակցութեան համար, որպէսզի ճշգրտօրէն կատարուին այն նախաձեռնութիւնները, որոնք պիտի կիրարկուին ըստ հանգուցեալի ընտանեկան պարագաներու յարմարութեան իրավիճակին:

Անգամ մը եւս կը փափաքինք շեշտել, Եկեղեցւոյ ծառայութեան մատուցման կարեւորութիւնն ու առաջնահերթութիւնը, որպէսզի կարենանք պատշաճօրէն կիրարկել մեր Եկեղեցապատկան ծառայութիւնը, զերծ մնալով որեւէ թիւրիմացութենէ եւ անպատեհ շարժառիթէ, օրինակ՝ դիակիզումի պարագային, յուդարկաւորութեան կարգը կը մատուցուի նախքան հրկիզումը, այլապէս, հրկիզուած մոխիրին վրայ արտօնուած չէ յուդարկաւորութեան կարգ կատարել որեւէ մէկ ձեւով, ըստ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ ծիսակատարութեան կանոններուն:

Հետեւաբար, մեր յորդորն է անմիջապէս կապ հաստատել Եկեղեցւոյ գրասենեակին հետ, հեռաձայնելով՝ (514) 279-3066 թիւին, կազմակերպելու յուդարկաւորութեան կարգին հետ առնչուող հարկ եղած կարգաւորումները:

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳՐԱՍԵՆԵԱԿ



ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Մեր հաւատացեալներուն կը յայտենք, թէ համաձայն Քէպէք Նահանգի առողջապահութեան Նախարարին՝ Մոնթրէալի շրջանը վտանգուած է թագաժահիրի Covid-19 կարմիր գոտիի զգուշացման հանգրուանով, որուն որպէս հետեւանք խմբային հաւաքակառուութեան թողարկման թիւը՝ կրճատուած է հասնելով **25 հոգիի,**

եւ պարտադրուելով ձեռք առնել առողջապահութեան բոլոր քայլերն ու միջոցները:

Նկատի առնելով համաճարակի ներկայ ընթացքը **առժամաբար կը դադրեցնենք «Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ, կատարուող բոլոր տեսակի հիւրասիրութիւններն ու հաւաքները մինչեւ Նոր տնօրինութիւն:**

Ձեզ կը մաղթենք առողջութիւն եւ ամենայն բարիք եւ յոյս կը յայտենք, որ յառաջիկայի փոփոխութիւններու եւ այլ մանրամասնութիւններու պարագային գրաւոր ձեզ տեղեակ պահել:

Ձերձ մնալ եկեղեցի յաճախելէ նկատի ունենալով հետեւեալ պարագաները.

1. Բոլոր այն անձինք, որոնք հիւանդանալու բարձր հակամետոութիւն ունին:
2. Ձեր անմիջական շրջանակին կամ ընտանիքին մէջ ոեւէ մէկը վարակուած է Թագաժահիր Covid-19-ով եւ կամ ունին հետեւեալ ախտանշանները՝

- Ձերմութիւն
- Հագ
- Կոկորդի ցաւ
- Հոտարութեան կամ համի զգայի պակաս

եւ կամ կատարած են Քէպէք Նահանգէն դուրս ճամբորդութիւն:

Ձեզ կը մաղթենք առողջութիւն եւ ամենայն բարիք եւ յոյս կը յայտենք, որ յառաջիկայի փոփոխութիւններու եւ այլ մանրամասնութիւններու պարագային գրաւոր ձեզ տեղեակ պահել:

Կարելի է Նաեւ առջանց Նուիրատուութիւններ կատարել այցելելով
Եկեղեցւոյ կայքէջը՝ saintgregory.ca

Faire un don



ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳՐԱՆԵՆԵԱԿ



AVERTISSEMENT

Nous informons nos fidèles que selon le Ministre de la Santé et le Directeur de la Santé publique, la région de Montréal se trouve en zone rouge de la pandémie coronavirus Covid-19. Par conséquent le nombre de fidèles assistant aux offices religieux est limité à **25 personnes**. Compte tenu de l'évolution actuelle de la pandémie, **nous suspendons temporairement tous types de réceptions et rassemblements dans la salle « Vatché Hovsepian ».**

Nous vous souhaitons santé, bien-être et espérons vous tenir informé de tout changement futur ou d'autres détails.

S'abstenir d'aller à l'église

- 1- Tous ceux qui ont un risque élevé de tomber malade.
- 2- Si quelqu'un dans votre environnement immédiat ou un membre de votre famille est actuellement infecté par le covid-19 et/ou présente les symptômes suivants :

- Fièvre
- Toux
- Mal de gorge
- Perte de l'odorat ou du goût
ou a voyagé en dehors du Province de Québec


Vous pouvez également faire des dons en ligne en visitant le site web de l'église saintgregory.ca

Faire un don



BUREAU DE L'ÉGLISE

ԵԿԷ՛Ք ՊԱՅԾԱՌԱՑՆԵՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ



Եկեղեցոյս պայծառութեան եւ առաքելութեան յարատեւման նախանձախնդիր մեր սիրելի հաւատացեալներ,

Միրով կը յայտնենք, թէ մեր եկեղեցին կարիքն ունի հետեւեալ իրերուն.-

- Օդորակիչի անհրաժեշտ սարքաւորման (Air Conditioner)
- Ս. Սեղանի ոսկեգոյն ասեղնագործ ծածկոց
- Հնգւորականաց հողաթափեր
- Սկիհի ծածկոցներ եւ Աւետարանի բռնիչ
- Շուրջառներ
- Մեծ Պահիի կամ Աւագ շաբթուան յարդարանք (սեղան եւ ծածկոց)
- Յիսուս Մանկան մտօր
- Եկեղեցոյ տօնաձառ
- Ճրագալոյցի եւ Տեառնդատաջի համար նախատեսուած դուրսի մոմեր
- Ջրօրինէքի Մափոք
- Ս. Խորանի 2 մեծ վարագոյր կարմիր եւ սև

Արդ, անոնք որոնք կը փափարին իրենց սրտաբուխ նուիրատութեամբ մասնակից դառնալ Եկեղեցոյ սուրբ առաքելութեան, հաճին կապ պահել Եկեղեցոյ հովիւին կամ քարտուղարութեան հետ (514) 279- 3066:

«Այս երկրի մէջ ցանկ՛քու հացդ, որպէսզի երկրի մէջ զայն հարիւրով պտուղ տուած գտնեն»:

«Հնգւոր հայելի»

Կանխայայտ շնորհակալութեամբ,
Հնգւոր Հովիւ եւ Ծխական Խորհուրդ